

## ԳԼՈՒԽ ԻԷ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ

Երկու օր վերջ մեր այս բարեկամաց խումբը կը հասներ Կ'անգուարի բերդը, ուր Յոզեաց վանքի Թեոդորոս վանահայրը՝ խոսքով եւ Գուրգէն յոգնութիւն կառնուին, երբ Յեղինէ տիկին եկաւ իրենց բարի գալուստ մաղթելու: Նոյն այն սենեակն էր ուր երբեմն Գուրգէն տեսութիւն ունեցեր էր իւր սրտին սիրելւոյն հետ:

Գուրգէն մինչեւ այն վայրկեանը, որ վանահայրը գնաց՝ անտարբեր տեսնուեցաւ Յեղինէի հետ, իսկ երբ միայն խոսքով եւ նա մնացին.

– Յեղինէ, քեզ շնորհակալութիւն չեմ կրնար ընել, ես գիտեմ եւ իմ սրտես կը չափեմ քու արարքդ, որ կարող եմ քեզ համար կրակի մէջ նետել ինքզինքս: Բայց քու բոլոր կարգադրութեանդ մէջ այնչափ ուշիմութիւն, այնչափ նախատեսութիւն կը գտնեմ, որ զիս շատ կը զարմացնէ եւ քու կորուստդ ինձ աւելի զգալի կրնար ընել եթէ տեղի մնար աւելւոյն: Ընդունէ՛ ո՛չ իմ շնորհակալութիւնքս՝ այլ շնորհաւորութիւնքս քու այդ նախատես իմաստութեանդ համար, որ գիտէ՝ բայց այդ աստիճանի բարձր չէի կարծեր, չէի կարծեր, որ իմ Յեղինէս Վասկանուշի հաւասար լինի: Խեղճ Յովնան, իսե՛ղճ Գուրգէն...

Այս խօսքերուն քանի մը րոպէ խոր լռութիւն յաջորդեց, մտածութեան վայրկեան էր այդ: Յեղինէ ընդհատեց լռութիւնը եւ հարցուց խոսքովու.

– Ո՞վ է Վասկանուշ:

– Բագրատունեաց Օրիորդ մը,– պատասխանեց նա,– ճաշէն վերջ պատմեմ քեզի Վասկանուշի եւ Յովնանու պատմութիւնը, վասնզի կարելի չէ այդ երկու անձը իրարմէ զատել, որ իրենց կենաց մէջ թեպէտ միշտ բաժնուած՝ միասիրտ եւ միահոգի ապրեցան, եւ հիմա աստուծոյ սեղանին առջեւ իրենց մարմինները քովե-քով կը հանգչին: